ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

26 հուլիսի 2016 թվականի **թիվ 84** քաղ.Մոսկվա

Արմավենու յուղի հիդրոգենացված զտամասերի խառնուրդն ըստ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի դասակարգելու մասին

Մաքսային միության մաքսային օրենսգրքի 52-րդ հոդվածի 7-ին կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Արմավենու յուղի հիդրոգենացված զտամասերի խառնուրդից բաղկացած, միկրոհատիկների տեսքով արտադրանքը (89%-ից ոչ պակաս)՝ լեցիտինի, կրեմնիումի դիօքսիդի, բուրավետիչի ավելացմամբ, որն օգտագործվում է կենդանիների եւ թռչունների կերակրման ժամանակ, Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի մեկնաբանման հիմնական 1-ին կանոնին համապատասխան, դասակարգվում է Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի 1518 00-րդ ապրանքային դիրքում:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահի ժ/պ՝ Կ.Մինասյան